

Երևանի «Վահագնի» բնակելի թաղամասի ջրամատակարարման, ջրահեռացման և ոռոգման համակարգերի վերաբերյալ ինժեներա-խորհրդատվական ծառայությունների մատուցում



Երկիր Հայաստանի Հանրապետություն

Քաղաք Երևան

Պատվիրատու “Հովնանյան Ինժեքներեյշնլ” ՍՊԸ

Ժամկետները 2004 – 2005թթ.

Ծառայության մոտավոր գինը

16 մլն. դրամ


Տեխնիկական առաջադրանք

1. Դաշտային գործիքային ուսումնասիրություններ, գործող համակարգերի առանձին հանգույցների բարելավման առաջարկություններ:
2. Ջրամատակարարման, ջրահեռացման, անձրևաջրերի հեռացման և ոռոգման համակարգերի գլխավոր հատակագծերի մշակում:
3. Աշխատանքային նախագծերի մշակումներ:



Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիրը

- ✓ Երևանի «Վահագնի» բնակելի թաղամասում, որը զբաղեցնում է շուրջ 150 հա տարածք, համաձայն գլխավոր հատակագծի, նախատեսվում է կառուցել 2-ից 3 հարկանի մոտ 500 բնակելի առանձնատներ, դպրոց, գուլիի խաղաղաշտ և մի շարք այլ կառույցներ:
- ✓ Դաշտային գործիքային ուսումնասիրությունների արդյունքում պարզաբանվել են ջրամատակարարման և ջրահեռացման գործող համակարգերը, բացահայտվել են առաջնահերթ բարելավման ենթակա տեխնոլոգիական հանգույցները, մշակվել են առանձին հանգույցների աշխատանքային նախագծեր:
- ✓ Մշակվել են բնակելի թաղամասի ջրամատակարարման, ջրահեռացման, անձրևաջրերի հեռացման և ոռոգման համակարգերի գլխավոր հատակագծերը:



- ✓ Գլխավոր հատակագծերի մշակման ընթացքում դիտարկված տարբերակների, տեխնիկատնտեսական հիմնավորումների համար հիդրավիկական հաշվարկներն իրականացվել են “Epanet” համակարգչային ծրագրով:
- ✓ Մշակվել են բնակելի III և V թաղամասերի ջրամատակարարման, ջրահեռացման, անձրևաջրերի հեռացման և ոռոգման համակարգերի աշխատանքային նախագծերը: Աշխատանքային գծագրերը մշակվել են “AutoCAD” գծագրական համակարգչային ծրագրով:

Աշխատանքի նպատակն է

Երևանի «Վահագնի» բնակելի թաղամասի ջրամատակարարման, ջրահեռացման, անձրևաջրերի հեռացման և ոռոգման համակարգերի գլխավոր հատակագծերի մշակում, և դրանց հիման վրա առանձին ենթաթաղամասերի ինժեներական համակարգերի աշխատանքային նախագծերի մշակում: